№ 246 ՈՒՐԲԱԹ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի· կէս տարվանը 6 ռուբլի·
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը·

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)·

Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարությունների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ·

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՑ 1910 Թ.

ФАБР МАРКА 1910 Т-ВА

ԹԻՖԼԻՍՈՒՄ „КОМЕТА" Աւճարկայա, № 8.
ТИФЛИСЪ

ԲԱՑՎՈՒՄ Է
ԾԽԱԽՈՏԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ
ԸՆԿ. „ԿՕՄԷՏԱ"
ՖԻՐՄԱՅՈՎ

Ֆաբրիկայի վարչությունը հարկ է համարում տեղեկացնել յարգելի հասարակության, որ ինքը 2 տարուց աւելի պատրաստվելով բանալ ծխախոտի գործարան, ձեռք է առել ամեն միջոցներ՝ ֆաբրիկան դնելու այնպիսի պայմաններում, որ կարելի լինի համեմատաբար ոչ-բարձր գներով բաց թողնել ամենաբարձր յատկության ապրանք։

Այդ նպատակով ֆաբրիկայի վարչությունը մեծ քանակությամբ գնել է լաւ տեսակի ծխախոտ, ձեռք է բերել միանգամայն կատարելագործված մեքենաներ, որոնք կրճատում են արդիւնաբերության ծախքերը, գ. ա. ծխողներին ապահովելու նպատակով՝ ֆաբրիկան դրված է առողջապահական հիմունքների վրա, բանւորները վարձված են ֆաբրիկային բժշկի քննությունից յետոյ, որին և յանձնաբարված է պարբերաբար գնել բանւորներին։

Յայտնելով հասարակությանը մեր ֆաբրիկայի բացման մասին, վարչությունը չը պիտի դիմէ սովորական բազմախոստում բեկլամների, համոզված լինելով՝ որ ամենալաւ բեկլամ կարող է ծառայել մեր արդիւնաբերության բարձր յատկությունը։ Յոյս դնելով հասարակության ուշադրության, վարչությունը ձեռնարկում է գործին՝ դէվիզով—

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶ ՀԵՏ

Եւ խնդրում է ապառողներին համեմատական կերպով համոզվել

ԸՆԿ. „ԿՕՄԷՏԱ"

(ու.կ.է.) ՖԱԲՐԻԿԱՅԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԵԱՆ ՄԵՋ։ 1242. 3—1

ՆԵՐԿ. 4. ԱԲՕՆԸՄԵՆՏԻ ՀԱՇԻՒ ԴՈՒՐՍ

## ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, նոյեմբերի 6-ին

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

երկրորդ անգամ հայ բեմի վրա հասարակության խնդրանքով

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

## ՏԱՅՓՈՒՆ

(ՓՈԹՈՐԻԿ)

Դրամա 4 արարածով, եռաբնակների կեանքից, հեղ. Լէնգլէյի, թարգմ. Աշիլեանի, խմբ. Տ. Յովհաննիսեանի

Մասնակցում են. տ. տ. Ադամեան, Մայսուրեան, պ. պ. Ալլահվերդեան, Արաքսեան, Արմէնեան, Աւետեան, Զարիֆեան, Թորոսեան, Խաչիկ, Մամիկոնեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Ռշտունի, Փիրումեան, Շահխաթունի և ուրիշ։

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին է։ ◆ Գլխ. ռեժիսոր՝ Ա. Արմէնեան

Տեղերի գները մատչելի են։

Վարչության հերթապահ անդամներ՝ { Գաբրիէլ Ծուրինեան, Գրիգոր Օքրոյեան

(ա. օ.) առ. 1244. 2—1

### ԿՈՐՈՎԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

II

Մենք գիտենք, որ ժողովուրդը շատ տեղերում աղքատացել է, խոշոր պարքերի մէջ է ընկել և դժուարանում է նոր ծախքեր անել։

Եւ անշուշտ ժողովրդի տնտեսական վիճակի բարւոքումն ու բարձրացումը կը նպաստէ նրա կուլտուրական միւս պէտքերի բաւարարմանը։

Բայց դպրոցների և ուրիշ կրթական-հասարակական հիմնարկութիւնների պահպանման և նորերի բացման խընդրում միայն տնտեսական հանգամանքը չէ դեր խաղում, այլ և հիասթափութիւնը, որ տիրել է ժողովրդին, այն սառնութիւնը, որով նա վերաբերվում է իր հոգեկան պահանջների նշանակութեան և իրաւունքներին։

Եւ մեզ յայտնի են մի շարք խոշոր աւաններ և գիւղաքաղաքներ, որոնք առանց մեծ դժուարութիւնների կարող էին ապահովել իրանց կրթարանները տեղական միջոցներով։ Բայց նրանք թերանում են այդ կարևոր պարտականութեան մէջ, որովհետև բարոյական կորով չեն գտնում իրանց մէջ անձնուէր կերպով վերաբերվելու օգտաւէտ գործին և կորցրել են վստահութիւնը դէպի միմեանց, դէպի գործիչները և դէպի կուլտուրական գործի փրկարարութեան ու անհրաժեշտութեան գաղափարը։

Մինչև ժողովուրդը չը նայի կրթական և ուրիշ կուլտուրական գործառնութիւնների վրա՝ իբրև անպայման անհրաժեշտութիւնների և իբրև հրամայողական ու անբացատրելի պահանջների վրա, միշտ էլ դանդաղ և երբեմն առաջ կերթայ կուլտուրական հիմնարկութիւնների հաստատումը մեր իրականութեան մէջ։

Ինչպէս ժողովրդի աշխատանքը և արհեստը անհրաժեշտօրէն կարևոր են նրա կեանքի համար, նոյնպէս կարևոր պէտք է ճանաչվեն նրա համար կրթական հիմնարկութիւնները։ Եւ ինչպէս չէ կարելի հրաժարվել առաջիններից, նոյնպէս անկարելիութիւն պէտք է համարվի երկրորդներից փախուստ տալը։

Եւ երբ այդ գիտակցութիւնը իւրացված կը լինի լիովին և կուլտուրական հիմնարկութիւնները իբրև իրականութեան անխուսափելի կարիքներ բաւարարված կը լինեն, այն ժամանակ ժողովրդի համար ստեղծված կը լինի կրկնակի բարիք կեանքի մէջ։ Կուլտուրական հիմնարկութիւնների միջոցով ժողովուրդը կը ստանայ թէ հոգեկան-բարոյական մխիթարութիւններ և թէ տնտեսական բարեմասնութիւններ, որոնց պակասութիւնը այնքան ճնշող ազդեցութիւն է անում ներկայումս։

Ճակատագրական խնդրի առաջ է դրված մեր ժողովուրդը։ Նա կամ պէտք է բաւականաչափ կորով և ընդունակութիւններ ունենայ քաղաքակրթական շաւիղների վրա ոտք դնելու և հաստատ քայլերով առաջ գնալու և կամ նա պէտք է իրան բարոյապէս և կուլտուրապէս մնանկ ճանաչելով՝ թողնի ամեն բան իրերի ընթացքին, նախօրօք հաշտվելով իր ապագայ դժբաղդ և թշուառ վիճակի հետ։

Մի տեղ դպրոց, միւս տեղ գրադարան, մի երրորդ տեղում արհեստանոց, կրեդիտային հիմնարկութիւն, փորձադաշտ, արդիւնաբերական ընկերակցութիւն և զանազան հիմնարկութիւններ կոչված են փրկարար դերեր խաղալու ժողովրդի կեանքում։

Եւ ժողովրդի մէջ չը պէտք է պակասի կորովը՝ իրականացնելու կուլտուրական հաստատութիւնների ցանցեր երկրի մէջ։

Ահա ի՛նչը չը պէտք է մոռանալ, ահա ի՛նչի մասին պէտք է մշտական հոգատարութիւն ունենալ։

Ա. Քալանթար

### ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցարսկոէ-Սէլօ, 3 նոյեմբերի

Առաւօտեան ժամը 11-ին արտասահմանից եկան Կայսրը և Կայսրուհին Գահաժառանգի և Օգոստափառ Աղջիկների հետ և Արքայական պավիլիոնից մեկնեցին Ալէքսանդրեան պալատը, ուր կատարվեց գոհաբանական մաղթանք։

Նոցին Մեծութիւններին Արքայական պավիլիոնում հանդիպեցին Մեծ Իշխանները, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը, շքախմբի անդամները և այլն։ Դուրս գալով սալոնվագոնից, Կայսրը բարևեց դիմաւորողներին։ (Հ. Գ.)

Լոնդոն, 3 նոյեմբերի

Թագաւորն եկաւ Բուկինհէմի պալատը և խօսակցեց լորդ Նոլիսի հետ։ Յետոյ եկաւ Ասկվիտը Թագաւորի հետ խորհելու համար։ Լորդ Կրիւն նոյնպէս ներկայ էր առաջին մինիստրի ընդունելության ժամանակ։ Օպոզիցիայի պարագլուխները, ի թիւս որոց Լէնսդոունը, Սալսբերին, Կէրզոնը, ժողովեցին Բալֆուրի բնակարանում խորհրդակցության համար, որ տեւեց մի ամբողջ ժամ։ Մինիստրների խորհրդի նիստը սկսվեց ժ. 4-ի կէսին։ Ժամը 4-ին Ասկվիտը և լորդ Կրիւն հեռացան Բուկինհէմի պալատից և գնացին մինիստրների խորհրդի նիստին։ Նիստը վերջացաւ ժամը 4 և 20 րոպէին։ Կարծում են, որ Ասկվիտը հաղորդել է մինիստրներին ունկնդրության հետևանքների մասին։ Թագաւորը ժամը 4 և 48 րոպէին մեկնեց Բուկինհէմի պալատից Սանդրինհէմ։

Լորդերի պալատում լորդ Կրիւն յայտնեց, պատասխանելով Լէնսդոունին, որ կառավարությունը այսօր և եթ երեկոյեան կը ներկայացնի մի բիլլ լորդերի պալատի veto-ի իրաւունքի մասին։

Լորդերի պալատ։ Լորդ Կրիւն, պատասխանելով լորդ Լէնսդոունիդ հարցապնդման, յայտնեց, որ կարող է տեղեկություն տալ իրերի յետագայ ընթացքի մասին միայն նրանից յետոյ, երբ համայնքների պալատում կանվի համապատասխան յայտարարություն։ Լէնսդոունը ասաց, որ այսօր և եթ կը ներկայացնէ մի բանաձև, որով կառավարությանը առաջարկվում է անյապաղ մի բիլլ ներկայացնել լորդերի պալատին veto-ի իրաւունքի մասին։ Veto-ի հարցի կոնֆերէնցիայի վերաբերությամբ Լէնսդոունը համաձայնում է, որ վիճաբանությունները գաղտնի կատարվեն։

Մամուլի մասին պաշտօնական աղբիւրից տեղեկացաւ, որ կառավարությունը մտադիր է խորհուրդ տալ Թագաւորին արձակել պարլամենտը նոյեմբերի կէսին։ Առաջին մինիստրի և լորդ Նոլիսի խօսակցությունը մինիստրների խորհրդի նիստից յետոյ տեւեց մի ժամ։ Ասկվիտը հաւանօրէն ներկայացրեց մտադիր չէ մեկնել Սանդրինհէմ։ «Դիօք» լրագիրը յայտնում է, որ երէկ երեկոյեան լսվեց շատ որոշակի մի լուր, իբր Ասկվիտը, ի նկատի ունենալով որ Թագաւորը մերժեց տալ նրա խնդրած անհրաժեշտ երաշխաւորությունները, կամենում է արձակել տալ կաբինէտը։

Ռէյտերը հաղորդում է, որ անգլիական, ամերիկական, գերմանական և ֆրանսիական ֆինանսական խմբակների ներկայացուցիչների միջև վերջերս համաձայնություն է կատարվել չինական փոխառության մասին։ Նկատի առնելով, որ համաձայնությունը իրաւունք է տալիս Չինաստանի բոլոր մասերին համահաւասար մասնակցություն ունենալ արտաքին փոխառությունների մէջ, նա հեռացնում է այն միտքը՝ թէ Չինաստանը կարող է դրաւվել որևէ մեծ պետությունից երկաթուղագծերի կառուցմամբ։ Համաձայնությունը կնքված է մի քանի տարիների համար։

Լորդ Կրիւնի բիլլը ձևական տեսակէտից ընդունվեց առաջին ընթերցումից յետոյ։ (Հ. Գ.)

Պարիզ, 3 նոյեմբերի

Միտինգը, որին ներկայ էին 5,000-ից աւելի կառապաններ, տնատէրեր, ճարտարապետներ և շահագրգռված սինդիկատների ներկայացուցիչներ, որոշում կայացրեց—ի նկատի ունենալով շարունակվող գործադուլները և շինարար արդիւնաբերության բանւորների յուզմունքները, կազմել սինդիկատ պատերների, կապալառուների, մատակարարողների, ճարտարապետների, տնատէրերի պատգամաւորների մշտական կազմակերպություն ընդհանուր շահերի միահամուռ պաշտպանության համար բանւորների հետ միջադէպերը ստեղծվելու դէպքում։

Պատգամաւորների պալատի մասնաժողովը ծովային գործերի վերաբերությամբ ընդունեց նաւաշինության կառավարական ծրագիրը, որի համաձայն ռազմի նաւատորմը բաղկացած է լինելու 28 զրահանաւերից, բաժանված 4 նաւախմբերի։

Ուղղելով մամուլի մէջ երևացած տեղեկությունները Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի և Միացեալ-Նահանգների միջև առաջիկայում կապվելիք պայմանագրի մասին, «Ժուրնալ-դը-Դէբան» մատնանշում է, որ Լիբերիայի դիպլոմատիական ներկայացուցչությունը չի միանայ Միացեալ-Նահանգների ներկայացուցչության հետ, սակայն կապահովվի Միացեալ-Նահանգների քաղաքացիներից նշանակված գործակալներով՝ երկրին ֆինանսական օգնություն հասցնելու փոխարէն։ (Հ. Գ.)

Մադրիդ, 3 նոյեմբերի

Էլմօկրիի հետ բանակցությունները վերջացան. սորագրվեց համաձայնություն։ Կանալէխասը բերանացի կը հաղորդէ պարլամենտին նրա բովանդակությունը։ Վարձատրության գումարը, որ Մարօկկոն վճարելու է Սպանիային ռիֆեան արշաւանքի համար, հաւասարվում է 65.000,000 ֆրանկի։ (Հ. Գ.)

Վիէննա, 3 նոյեմբերի

Աւստրիական պատգամաւորությունը մերժեց Շուստէրշիչի առաջարկությունը անվստահություն յայտնելու աւստրո-ունգարական ֆինանսների մինիստր բարօն Բուրիանին՝ կմէտների կախման յարաբերությունները վերացնելու հարցում ցոյց տուած գործողությունների համար։

Սակսոնիայի թագաւորը եկաւ առաւօտեան և կանգ առաւ Աուգարտէն պալատում, ուր առաւօտեան նրան այցելեց կայսրը։ Յետոյ թագաւորը Հոֆբուրգում այցելեց կայսրին և շնորհաւորեց նրան ծննդեան 80-ամեակի առիթով։ (Հ. Գ.)

Մոսկվա, 3 նոյեմբերի

Դումայի կրկնակ վիճաբանություններից յետոյ մերժեց կախել Մուրոմցեվի լուսանկարը Դումայի մեծ դահլիճում, համաձայնելով կախել նրան փոքր դահլիճում և հիշեցել թոշակ ու մրցանակ Մուրոմցեվի անունով համալսարանում։ (Հ. Գ.)

Կարս, 3 նոյեմբերի

Զարաքիլիսայից բերվեց գեն. Նեսվէտաեվի մարմինը և հանդիսաւորությամբ թաղվեց եղբայրական գամբարանում։ (Հ. Գ)

Մոսկվա.—Նախկին ուսանող Փիրալեանցը գործով վիրաւորեց համալսարանի բեկտոր Ա. Մանուիլովին համալսարանում չընդունելու համար։ Պրոֆեսորները և ուսանողները Մանուիլովին հատկանք յայտնեցին։ («Ե.»)

Օդեսա.—Փաստում եղան մի քանի ժանտախտի դէպքեր։ («Ե.»)

Մադրիդ.—Ալֆոնս Թագաւորը այցելու է իտալական թագաւորին։ («Ե.»)

### ԳԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 3 նոյեմբերի

Ղօշանը պաշարող բախտիարցիների խմբերը եկան Թէհրան։ Շիրազ մտնելու եկած խումբը եռանդով պատրաստվում է իտալացի ինստրուկտոր Մալէտի և գերմանական գնդակացիրաձիգ Հաղէի մասնակցությամբ։ Քիրմանշահի նահանգապետ Նիզամ-ուս-Սալթանէին պատուիրագրվեց շտապով մեկնել Շիրազ։ Նիզամ-ուս-Սալթանէն նշանակվեց Ֆարսի գեներալ-նահանգապետ։ Քիրմանշահի նահանգապետ նշանակվեց Բուկն-ուդ-Դօվլէ։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 3 նոյեմբերի

Թիւրքերից զինված Կուլունջի գիւղի բնակիչները կազմել են աւազակախմբեր և կողոպտում են Ուրմիա-Սալմաստ ճանապարհին։ Ամեն հաղորդակցություն ընդհատված է։ Սալմաստի պաշտը բռնել են Կուշչինի լեռնանցքի մօտ։ Ուրմիայի առևտրականները իրարանցման մէջ են։ (Հ. Գ.)

### ԼԷՎ ՏՕԼՍՏՕՅԻ ՄԱՍԻՆ

Օստապովո, 3 նոյեմբերի

Տոլստոյը տառապում է թոքերի բորբոքումով։ Տաքությունն է 39,8։ Հիւանդը գտնվում է լաւ ու հանգիստ վիճակում։

Առաւօտեան տեղի ունեցաւ բժիշկներ Մակովեցկիի, Ստախովսկիի և Նիկիտինի հանախորհուրդը։ Գիշերով եկաւ կոմսուհի Սոֆիա Անդրէեվնան իր բժշկի հետ։ Հիւանդի մօտ կոմսուհուն դեռ թոյլ չը տուին։ Նիկիտինի ասելով աջ թոքը մաքրվել է։ Ընդհանուր դրությունը լաւ է. հիւանդը չէ դառնացում։ Տոլստոյի ընտանիքը ճաշում է կայարանում, ապրում է վագոնի մէջ։

Վերջնականապէս պարզվեց, որ Տոլստոյը հիւանդ է թոքերի ծանր բորբոքումով։ Դրությունը շատ լուրջ է, սա-

կայն անյուսալի չէ։ Առաւօտեան տաքութիւնը իջաւ 37°-ի։

Բժիշկների ասելով Տօլստոյի սիրտը շատ թոյլ է, ուստի դրութիւնը լուրջ է։ Երէկ զարկերակը ժամանակ առ ժամանակ խփում էր 104 անգամ, սկզբում խփում էր 120 անգամ։ Հիւանդը գտնվում է լիակատար գիտակցութեան մէջ։ Նա մի անգամ արիւն թքեց։ Ցերեկով տաքութիւնը իջաւ 36,7°-ի։ (Հ. Գ.)

Մոսկվայում ստացված տեղեկութիւնների համեմատ, Լ. Ն. Տօլստոյի հեռանալը Եասնայա Պօլեանայից ոչնչան էլ անսպասելի չէր մեծ գրողին մօտիկ անձանց համար։ Եւ նրա վերջին ուղեորութիւնները դէպի Կորէնէվօ և ապա Կօչէտի հիմք ունէին Տօլստոյի նոյն զգացմունքը, որը գրաւում էր նրան դէպի միայնակեցութիւն։ Նրան մօտիկ բարեկամները հաւատացած են, որ նրա առողջութեանը ոչինչ վտանգ չէ սպառնում, որովհետև բժիշկ Մակովիցկին նրա հետ է։ Տօլստոյի ընտրած տեղը ընակութեան համար յայտնի է միայն նրան և նրա ուղեկիցին։

Տօլստոյի մեծաւոր անձանց բացատրութիւնները Եասնայա Պօլեանայից նրա հեռանալու պատճառների մասին ոչինչ նոր կամ անսպասելի բան չեն պարունակում։ Յայտնի է, որ Տօլստոյը տարիներ շարունակ նեղվում էր նրանից, որ նրա կեանքի եղանակը չէ համապատասխանում իր վարդապետութեանը և յանկութիւններին։ Վերջին ժամանակներս, որպէս հաւատացնում են, դժգոհութեան զգացմունքը սուր կերպանք ընդունեց մի քանի նոր փաստերի պատճառով, և դրա հետևանքը եղաւ մեծ գրողի վերջին որոշումը։ Իսկապէս ասած Տօլստոյի գնալը Կորէնէվօ և Կօչէտի փորձեր էին նրա կողմից փոխել, ըստ կարելւոյն, կեանքի պայմանները, որ սակայն նրան չը գոհացրեց։ Այդ բոլորի մասին Տօլստոյ չէր սիրում խօսել և նրա ծ նր մտածումների մասին բարեկամները տիպված էին իրանք ալաւ եզրակացութիւններ անել։

Երէկ Մոսկվա վերադարձաւ Ս. Լ. Տօլստոյ, որը Եասնայա Պօլեանա է կանչված Լեվ Նիկոլայևիչի հեռանալուց յետոյ։

Ս. Լ. Տօլստոյ ըսեց իր հետ այն նամակի պատճէնը, որ թողել է մեծ գրողը հեռանալուց առաջ։

Թողած նամակի մէջ Լ. Ն. Տօլստոյ բաւական մանրամասն պատճառաբանում է իր վարմունքը։ Մեծ գրողը գրում է, որ ծանր է նրա համար ապրել շրեղութեան մէջ, որ կեանքի եղանակը այստեղ հակառակ է նրա բոլոր համոզմունքներին, որ երբեմն է նա այլ կեանքի մասին, երբեմն է վաղուց, այն ժամանակից, երբ նա ընդունեց յայտնի մտքերը։ Լ. Ն. գրում է ապա, որ հեռանում է նա այդ աշխարհային կեանքից, որպէս մի քանիսները գնում են վանք, և խնդրում է անհոգ մնալ նրա մասին և չանհանգստացնել նրան, որովհետև իր ընդունած որոշումը անդրդուելի է, նա չի վերադառնայ։

Տօլստոյի մերձաւորների վրա նրա վճիռը վերջի ի վերջոյ այն տպաւորութիւնը թողեց, որ նա չի վերադառնայ։ Թէ որպիսի կա-

## ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ*)

(Սոցիալ-մանանական էսքիզ)

«Ոչինչ այնքան օտար չէ մեզ համար, որքան հանրակական գործերը»—բացագանչում է Տերտուլիանոսը, ոգևորված՝ ասկետական լոգունգի բարբանջանքներով։ Եկեղեցական այն հայրերը, որոնք առաջին անգամ ձեակերպում էին քրիստոնէական եկեղեցու դօգման, հիմնվելով Աւետարանի հակասական գաղափարների և առաքելներից ամենամոլեռանդ պահանջողականի՝ Պօղոս առաքելի գրած թղթերի վրա, նորագոյն դաւանանքի տրամաբանական հետևողութեամբ եկան կնոջ առան աշխարհային կեանքի, մարդկային անհատական և հասարակական պահանջների բացարձակ ժխտման գաղափարին։ Ինչպէս աշխատութեանս նախորդ գլուխներից մէկում շեշտել էի, երանելի Օգոստինոսը՝ ծնված հեթանոս հօր ընտանիքում, քրիստոնէական կրօնը այնպիսի սուր հակադրութեան մէջ էր ամփոփել աշխարհային «մեղալից», «յանցաւոր» կեանքի ընդդէմ, որ վերջինս այդ երանելու բերանով յայտարարվեց կատարեալ մարմնացումն սոսկալի չարի, մարմնացումն սատանայական էլեմենտների, որոնք անվերջ կռիւ են մղում երկնային զանազանդենամ, հանդերձեալ թագաւորութեան դէմ, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարմնացումն անսահման բարու, անսահման երանացման, յաւիտենական երջանկացման... Այս և սրա նման կատաղի ապոլոգետները, որոնք քրիստոնէական նորահաստատ եկեղեցին իր հասարակական սենդեցներով հասցրել էին քարացած ճշմարտութեան, բացարձակացման, եթէ կարելի է այսպէս ասել, որի դէմ ամենափոքր հակաճառութիւնը կարող էր յանդգնողին խարոյկի վրա այրել, ահա այդ նեղահայեաց, օրակուրանտ հայրերը քրիստոնէական երկայնամիտ «անսահման» սիրոյ քարոզով ժամանակի ընթացքում հաւատացեալների մէջ այնպիսի խորին անհամբերողութիւն, այնպիսի ծայրաչեղ տենչութիւն մարդին դէպի այլակրօն տարբերը, որ ազգերը ազգերի վրա ելան, թագաւորութիւնները թագաւորութիւնների վրա, եղան սուրը, յաջողեցին սրածութիւններ, ամենուրեք արիւնհեղութիւն ու ավերածութիւն, նոր հիմունքին կործանումը, նորի բռնի կաշկանդումը... Extra ecclesiam nulla salus... Արտաքոյ եկեղեցւոյ չիք փրկութիւն։ Աստուածպետական ձգտումների կատաղի շրջանը. աշխարհայինը ենթակայ, հպատակ ամբողջվին կաթոլիկ ամենազօր եկեղեցուն։ Պապը՝ բարձրագոյն ամենիշխան փոխարքան. մարդկային հասարակութեան մեղալից զանգուածը իր փրկութիւնը միմիայն և միմիայն եկեղեցու նուիրապետութիւնից պէտք է հայցէր։ Մեղքերի թողութիւնը այդ նուիրապետութեան բարձունքի անխախտ մենաշնորհն էր։ արքայութեան ամրակուռ դռների բանալիները Պետրոս առաքելի ձեռքով յանձնված էին աստուածային փոխարքայի տրամադրութեանը։ Մարդկային միտքը պաքտաւորված էր խոնարհվել այդ նուիրապետութեան առջև. նա իրաւունք չունէր գործել ազատ և անկախ թուիչքներ։ Գիտութիւնը, փիլիսոփայութիւնը անպայման կերպով պէտք է ճանաչէր իր չափը։ նա չունէր արտաքոյ եկեղեցական խաւար ասատուածաբանութիւնից մի քայլ առաջ անցնելու։ նա զարձել էր «աղախին» աստուածաբանութեան առջև. սխօլաստիկները իրաւամբ կարող էին կրկնել թէ՝ philosophia est ancilla theologiae...

Այսօրինակ ծայրայեղօրէն մթին քաոսում, ամեն աշխարհայինի կատաղի ժխտման ժխորում ծնունդ առաւ ճգնաւորականութիւնը, ասկետիզմը, որը իր անբնական կեանքի բացասական պայմանների մէջ առնօրինակ կերպով զարգացնում էր ստորագոյն էգօիզմի ցածր զգացմունքը։ Քրիստոնէական ասկետիզմը, իբրև շարունակութիւն և խառնուրդ դասական Յունաստանի ցինիզմի և ապա հելլէնա-հռոմէական ստոիցիզմի, միանգամայն ժխտում էր թէ հասարակական կեանքի կարևորութիւնը և թէ մասնաւորապէս ամուսնական յարաբերութիւնները անհատի համար։ Քրիստոնէականը սակայն այդպէս լինելով՝ ասկետական շարժման սաղմային շրջանում և իր մէջ սոսկալի չափերով զարգացնելով մարմնական պահանջներին անբնական միջոցներով դոհացում տալը՝ հետզհետէ յաջորդ դարերում խմբվում կազմակերպվում է, նպատակ դնելով որպէս թէ այս նզովեալ «civitas terreno» գայթակղիչ հրապոյրների ու փորձութիւնների դէմ միահամուռ ոյժերով մաքառելու համար։

Հստ այդ «իդէական» բարոյագիտութեան՝ կինը, մարմնական պահանջների այդ սանձարձակ օջախը, մի յանցագործ էութիւն է. ցածր որակով այդ արարածը՝ սատանայական մեքենայութիւն։ Կինը թուլաւոր սարդի ոստայն է, որը ձգտում է խաճել աստուածավախ մարդու անմեղ էութիւնը. նրա մոլեգին տենչերը նողկալի են ու վերջին ծայր պժգալի՝ աստուածընտիր քրիստոնեայ ճգնաւորի համար. խորին զզուանքով ու մոլի ատելութեամբ նա ատելիօրեն ու խորշում է սատանայի ծնունդ կնոջից...

— Tu es diavoli janua,—բացագանչում է նոյն Տերտուլիանոսը,—tu es arboris ilius resignatrix, tu es divinae legis prima desertrix, tu es, quae eum persuasisti, quem diabolus aggredi non voluit.

Amor si vincitur, diabolus vincitur!..

Մոլեռանդ Պօղոսի մոլեռանդ թարգմանները...

Եւ կենսբիմների համախմբումով ատիճանաբար կազմակերպվում են, հիմնվում բազմաթիւ միաբանութիւններ, ստեղծվում են վանական կենտրոնական կառավարութիւնները և գրաւում լայնատարած կալուածներ՝ հորտերի ահագին բազմութիւններով։ Յար և նման հիմունքներով ծնունդ են առնում նաև միանձնուհիների ժենսատանները, որոնք նոյնպէս հրաժարված էին այսօր մի քանի տասնեակ գնողներ ունէին, այսօր մի գնող ունեն, որ ինչպէս ուզէ՝ այնպէս կանէ։ Բանի որ նաւթարդիւնաբերողների դրութիւնը որոշված է և նրանք գտնվում են ծանր օրերի նախօրեակում, մի անելիք է մնում—միանալ սինդիկատով և միահամուռ ոյժով կռուել Նօբէլի դէմ։

Եւ այդ կարող են իրականացնել շատ հեշտութեամբ, մանաւանդ հիմա, քանի որ պարզ է, ուրիշ ելք չը կայ։

Ներկայ հանգամանքում աւելի տուժում են էլի մեծ ֆիրմաները, ինչպէս՝ Մանթաշեանը, Միրզոյեանը, Մոսկովսկի-Կաւկազսկի ընկ., Զուբալովը, Փրթօյանը և այլք։ Եւ այնքա պարտաւոր են անմիջապէս նախաձեռնութիւն վերցնել իրանց վրա, կազմել մի կոմիտէ, որին և յանձնել գործի կառավարութիւնը։ Հաւատացած ենք, որ փոքր ֆիրմաները ուրախութեամբ կը միանան։

Բաւական է, որ ունենան մի պահեստ, ուր կարողանան պահել 20—30 միլ. պուդ նաւթ. եթէ կարողանան դիմանալ 2 ամիս արդէն, կարող են ազատ մրցել Նօբէլի հետ. այդ պահեստները սրանց համար կը շինէ ամեն մի քանկ. բաւական է, որ դուք ապահովեցնէք, որ որոշ քանակութեամբ նաւթ կը թողնէք պահեստում. բացի այդ պահեստները, կարելի է և վարձել շատ ըէզервուարներ. նոյնիսկ ամեն մի ֆիրմա իր ոյժի չափ ստիպված կը լինի նաւթ պահել իր պահեստներում։

Բաւական է, որ սինդիկատը մի որոշ ամանակ տայ իրան նաւթ յանձնողներին, ամենքը ուրախութեամբ կը համաձայնվեն։

Ա. Ա.

### ՅԱՒԱԼԻ ՊԱՏԱՀԱՐ

Անկարագրելի ցաւ պատճառեց բոլորին հասարակական և գրական գործիչ, ուսուցիչ և «Գեղարուեստի» խմբագիր Գարեգին Լևոնեանին պատահած դժբաղդութիւնը։

Ամսոյ 3-ին, երեկոյեան ժամը 6-ին, Սարգիսեանց փողոցի № 26 տանը, ուր և ապրում էր Գարեգին Լևոնեանը և ուր գտնվում էր նրա հիմնած «Գեղարուեստական կուրսերը», ծագեց խոշոր հրդեհ, որին ճարակ եղաւ թէ նրա և թէ շրջրոդ յարկի մէջ ապրող մեծ ընակիչների գոյքը։ Գարեգին Լևոնեանը, որը իր եռանդուն և արդիւնաւէտ գործունէութեան շնորհիւ յայտնի է մեր հասարակութեանը գեղարուեստի ասպարեզում, կրեց սոսկալի և անդնահատելի չափերի հանուն ցաւ։

Տարերքը լափեց նրա ամբողջ կայքը, կանվարտները, հարուստ գրադարանը, հայ պարբերական մամուլի ամբողջ ժողովածուն, որպիսի հաւաքածուն հաղուագիւտ է, «Գեղարուեստի» հին և նոր բոլոր հատորները, այդ հանդիսի բոլոր նիւթերը, մի խօսքով ջնասէր գործիչը, որը տարիների ընթացքում ամենայն խնամքով հաւաքում էր այդ բոլորը, որոնց թւում և հին գրքերի բաւական խոշոր քանակութեամբ ժողովածուն, գլխովին ոչնչացան և հանակրելի գործիչը զրկվեց իր բոլոր ունեցուածքից։ Հայ հասարակութեան և մասնաւորապէս նրա բարեկամների ու յարգողների սեպուհ պարտականութիւնն է օգնութեան հասնել նրան և սոսկալի ցաւը, գէթ մասամբ, ծածկել։ Թող չը վիրաւորվի պ. Լևոնեանը այս առաջարկութեան համար. այդ մեր պարտականութիւնն ենք՝ հատարում։

Անշուշտ, որչափ էլ մեծ լինի այդ օգնութիւնը, այնուամենայնիւ չէ կարող ծածկել նրա խոշոր վնասը. բայց և այնպէս պէտք է անել այդ, որով ցոյց կը տայ հասարակութիւնը դէպի նրա գործը հատարկութեան առհաւատչեայ, ի նշան խրախուսանքի ժրաջան գործչի։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Սղնախ, 1 նոյեմբերի

Տեղիս քաղաքային դպրոցի վերանորոգութիւնն աւարտվեց։ Ուսումը սկսվեց հոկտեմբերի 1-ին։

Անցեալները հաղորդել էինք, որ ժամապահեստը տրվեց կապալով տարեկան 500 ռուբ., մինչդեռ տնտեսական եղանակով կարող էր բերել մօտ 700 ռ.։ Այդ մասին այս կարծիքը կայ. «Բաս ինչ անենք, ում տուեցինք՝ կերաւ, հոգաբարձութիւնը չէ կարելի հաւատալ, աւելի լաւ է 500 ռ. ստանալ նաղդ, քան թէ կորցնել»։ Դա ցաւալի է, բայց դաժն իրողութիւն է։

1899 թ. հանգուցեալ Դէորգ ք. Տէր-Դաւթեանը, մոմապահեստի փողերը ծախած լինելով, ստորագրութիւն տուեց քննիչ յանձնաժողովին 360 ռ.։ Այդ թուղթը գտնվում էր Վ. Ենիկոլօփեանի մօտ։ Ցանկալի է, որ հոգաբարձութիւնը բացատրէր, թէ գոյութիւն ունի՞ այդ թուղթը, թէ ոչնչացաւ, թաղվեց...

N. N.

Զաքաթալա, 1 նոյեմբերի

Խալերան Ալէքսանդրօպոլ և Կարս տարածվելուց յետոյ՝ մուտք գործեց և Արևելեան ու Արևմտեան Շիրակ ու բաղմաթիւ գեղեր տարաւ գիւղերից։ Կառավարութեան կարգադրութիւնով երկու մասումն էլ գիւղական հասարակական դատարաններից շրջաբերական հրամանները ուղարկվեցին ամեն գիւղ, որպէսզի իւրաքանչիւր գիւղում հիւանդանոցներ բացվեն և բժիշկներ հատատվեն։ Ներկայումս ողջ Շիրակը զերծ է այդ համաճարակ հիւանդութիւնից. թէև վերջերս մի դէպք եղաւ, բայց այն էլ աջող անցաւ։

Շիրակի գաւառի շատ գիւղերում մինչև այժմ գոյութիւն ունեն վատ ու անպատ սովորութիւններ հողը հերկելու համար։ Այդ գիւղերում սովորութիւն են դարձրել աշանը հերկելու հողերը, փոխանակ ամառը, որպէսզի հողը փխրուն դառնայ և այլվի արևի տակ. ընդհանրապէս ամառնային հերկերը աւելի պտղատու և նպատակայարմար են, քան թէ աշնանային, երբ ցուրտը սկսված են և հերկը այնքան նպատակայարմար պտղաբեր չի լինի։

Մեր գաւառական դպրոցները անօրմալ վիճակից հանելու և քիչ ու շատ օրինաւոր ուսուցիչներ ունենալու համար, պէտք է գաւառական ուսուցչական ժիութիւն հիմնել։

Տէր-Սարգսեան

Շուշի, 27 հոկտեմբերի

Մօտենում են ձմեռվայ ապրուստի հայթայթման ամիսները... Աշխատանքի այդ եռուն օրերին փոխանակ օտարութեան մէջ գտնվող աշխատող ոյժերը հայրենի երկիր վերադառնալու՝ ընութիւնից բաժին ընկա-

*) Տես «Մշակ» № 245.

գութեան մէջ կապրի նա, դեռ ևս պէտք է գուշակել։ («Բ. Բ.»)

—

Պետերբուրգ.—Մինիստրների խորհրդի նախագահ Սուվորինը Եասնայա Պօլեանա ուղարկեց մի պաշտօնեայի Լ. Ն. Տօլստոյի մեկնման պատճառները պարզելու համար։ («Ե.»)

—

Բրիւսէլ.—Լրագիրները բազմաթիւ յօդուածներ են նուիրել Տօլստոյի հեռանալու առիթով։ («Ե.»)

—

Բէլգրադ.—Բոլոր լրագիրներում յօդուածներ են տպված Լ. Տօլստոյի մասին։

(«Ե.»)

## ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 16 հոկտեմբերի

Մի ամսից աւելի է, որ Վանի ծովի վրա երևացել է առաջին շոգենաւակը, որ նաւարկում է աջողութեամբ։ Յիշեալ շոգենաւակի գործիքները մի քանի տարիներից վեր ուղարկվել էին Կ. Պոլսից ու Տրապիզոնում սպասում էին մի շինարար ձեռքի, որ իրագործել տար երկար տարիներից վեր մտադրված խորհուրդը և աջողեցնէր մի կուլտուրական ձեռնարկ։ դա եղաւ մեր գաւառի ներկայ լուսափայլ վալի Բէքիր բէյը։ Սա բերել տուեց յիշեալ գործիքները Տրապիզոնից և ստացեալ գաբարանից սկսել տուեց նրա շինութիւնը։ Երկար վարանումներից յետոյ, որովհետև պակասում էր գործը ղեկավարող ձեռք, հազիւ թէ աջողվեց ու իրագործվաւ մի գործ, որ ժամանակի խոշոր պահանջ ու մի անհրաժեշտութիւն էր։

Նահանգիս վալին երկու շաբաթ առաջ յիշեալ շոգենաւակով պտոյտ գործեց ծովի շրջապատը, հանդիպելով գլխաւոր նաւահանգիստները, ինչպէս Թաւրան, Ադիլջեվազ, Արճէշ ու Լիմ անապատ. ամեն տեղ ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն արեց վալիին և նրան ընկերակցող պաշտօնեաներին ու օվասիներով ողջունեց առաջին շոգենաւակի երևումը։ Թաւրան Բիթլիսի նաւահանգիստն է Վանի ծովի վրա. այնտեղ եկել էր Բիթլիսի վալին՝ իր հետ ունենալով նահանգի գլխաւոր պաշտօնեաներին. ուշշենաւի վրա երկու վալիները ու նրանց հետ եղող պաշտօնեաները ողջագուրեցին իրար, ուրախութիւն յայտնելով որ վերջապէս բաղդ են ունեցել իրանց օրով իրագործված տեսնելու տարիների փափագն ու խորհուրդը։ Արճէշում ժողովուրդը արևելեան գավուզ-զուռնաներով ընդունեց շոգենաւը՝ այդ կերպ արտայայտելով իր ուրախութիւնը, իսկ Լիմ անապատում հարիւրամեայ ծերունի վանական Թադէոս վարդապետ արտասուաթոր աչքերով ընդունեց շոգենաւը ու նրա վրա նաւարկողներին, օրհնելով առաջին շոգենաւը և նրա իրագործմանը աշխատող վալի Բէքիր բէյին՝ արտասանելով Սիմէոն ծերունու դարաւոր աղօթքը՝ «Արդ արձակեա զծառայս քո ի խաղաղութիւն»։

Յիշեալ նոր շոգենաւը, իբրև առաջին փորձ, ի հարկէ ամեն կատարելութիւնով օժտված չէ, բայց կարող է իբրև օրինակ ծառայել ուրիշ նման ձեռնարկների. արդէն խորհուրդներ ու ձեռնարկներ են լինում կազմելու մի ակցիօներական ընկերութիւն

Ն Ա Ւ Թ Ա Ր Դ Ի Ւ Ն Ա Բ Ե Ր Ո Ղ Ն Ե Ր Ի Ց

## ՔԱՆԻ ՈՒՇ ՉԷ՝ ՄԻ ՑԵՂԻՔ

Նաւթարդիւնաբերող ֆիրմաների ներկայ դրութիւնը ստիպողաբար պահանջում է անմիջապէս կազմակերպվել, համաձայնութեան գալ սինդիկատ կազմել։ այլապէս դրութիւնը լուրջ է։

Նօբէլը գնեց, իր ձեռքը առաւ Թագուից պատանվող կերոսինի ամենախոշոր մասը և վեց ամիս կերոսինի հրապարակի տէրն է, արժէքի թելադրողը։ Այդ բոլորը նա արեց այնքան տակտիկայով, նախամտածված, որ ոչ մի գործարանատէր չէր իմանում, թէ ինչ էր կատարվում միւսի մօտ։ Նա գնեց կերոսինի մեծ մասը՝ զանազան ձևով, զանազան պայմանով. օրինակ՝ նա գնեց մի քանի ֆիրմաներից՝ որոշ, ամուր արժէքով, 18—20 կ., մի բանիսից գնեց այն պայմանով, որ տայ զավօդչիկին 1 պ. 10 ֆ. նաւթ և 2½ կօպէկ փողով և ստանայ 1 պուդ կերոսին։ Կան և այնպիսի առքեր, որ բօրսային արժէքով պէտք է 3 պ. 10 ֆ. նաւթի արժէքի վրա աւելացնել 3½ կ., և կը ստանայ 2 պուդ մազուտ և 1 պուդ կերոսին։

Բացի այդ՝ զանազան ուրիշ պատրուակներով Նօբէլը ձեռք բերեց այն զավօդները, որ ներկայումս թէև չէին գործում, բայց կարող կը լինէին գործել՝ եթէ ցանկանային. այդպիսիներից կապալով վերցրեց կամ գնեց այն պայմանով, որ եթէ 6 ամսվայ ընթացքում չը գնէ, ամսական 1,000 ռ. տուգանք տայ։

Այդպիսով Նօբէլը, գնելով բոլոր կերոսինը՝ տէր է դառնում հում նաւթի հրապարակին։ Նաւթարդիւնաբերողները եթէ մինչև այսօր մի քանի տասնեակ գնողներ ունէին, այսօր մի գնող ունեն, որ ինչպէս ուզէ՝ այնպէս կանէ։ Բանի որ նաւթարդիւնաբերողների դրութիւնը որոշված է և նրանք գտնվում են ծանր օրերի նախօրեակում, մի անելիք է մնում—միանալ սինդիկատով և միահամուռ ոյժով կռուել Նօբէլի դէմ։

Եւ այդ կարող են իրականացնել շատ հեշտութեամբ, մանաւանդ հիմա, քանի որ պարզ է, ուրիշ ելք չը կայ։

Ներկայ հանգամանքում աւելի տուժում են էլի մեծ ֆիրմաները, ինչպէս՝ Մանթաշեանը, Միրզոյեանը, Մոսկովսկի-Կաւկազսկի ընկ., Զուբալովը, Փրթօյանը և այլք։ Եւ այնքա պարտաւոր են անմիջապէս նախաձեռնութիւն վերցնել իրանց վրա, կազմել մի կոմիտէ, որին և յանձնել գործի կառավարութիւնը։ Հաւատացած ենք, որ փոքր ֆիրմաները ուրախութեամբ կը միանան։

Բաւական է, որ ունենան մի պահեստ, ուր կարողանան պահել 20—30 միլ. պուդ նաւթ. եթէ կարողանան դիմանալ 2 ամիս արդէն, կարող են ազատ մրցել Նօբէլի հետ. այդ պահեստները սրանց համար կը շինէ ամեն մի քանկ. բաւական է, որ դուք ապահովեցնէք, որ որոշ քանակութեամբ նաւթ կը թողնէք պահեստում. բացի այդ պահեստները, կարելի է և վարձել շատ ըէզервուարներ. նոյնիսկ ամեն մի ֆիրմա իր ոյժի չափ ստիպված կը լինի նաւթ պահել իր պահեստներում։

Բաւական է, որ սինդիկատը մի որոշ ամանակ տայ իրան նաւթ յանձնողներին, ամենքը ուրախութեամբ կը համաձայնվեն։

Ա. Ա.

## ՑԱՒԱԼԻ ՊԱՏԱՀԱՐ

Անկարագրելի ցաւ պատճառեց բոլորին հասարակական և գրական գործիչ, ուսուցիչ և «Գեղարուեստի» խմբագիր Գարեգին Լևոնեանին պատահած դժբաղդութիւնը։

Ամսոյ 3-ին, երեկոյեան ժամը 6-ին, Սարգիսեանց փողոցի № 26 տանը, ուր և ապրում էր Գարեգին Լևոնեանը և ուր գտնվում էր նրա հիմնած «Գեղարուեստական կուրսերը», ծագեց խոշոր հրդեհ, որին ճարակ եղաւ թէ նրա և թէ շրջրոդ յարկի մէջ ապրող միւս ընակիչների գոյքը։ Գարեգին Լևոնեանը, որը իր եռանդուն և արդիւնաւէտ գործունէութեան շնորհիւ յայտնի է մեր հասարակութեանը գեղարուեստի ասպարեզում, կրեց սոսկալի և անդնահատելի չափերի հանուն ցաւ։

Տարերքը լափեց նրա ամբողջ կայքը, կանվարտները, հարուստ գրադարանը, հայ պարբերական մամուլի ամբողջ ժողովածուն, որպիսի հաւաքածուն հաղուագիւտ է, «Գեղարուեստի» հին և նոր բոլոր հատորները, այդ հանդիսի բոլոր նիւթերը, մի խօսքով ջնասէր գործիչը, որը տարիների ընթացքում ամենայն խնամքով հաւաքում էր այդ բոլորը, որոնց թւում և հին գրքերի բաւական խոշոր քանակութեամբ ժողովածուն, գլխովին ոչնչացան և հանակրելի գործիչը զրկվեց իր բոլոր ունեցուածքից։ Հայ հասարակութեան և մասնաւորապէս նրա բարեկամների ու յարգողների սեպուհ պարտականութիւնն է օգնութեան հասնել նրան և սոսկալի ցաւը, գէթ մասամբ, ծածկել։ Թող չը վիրաւորվի պ. Լևոնեանը այս առաջարկութեան համար. այդ մեր պարտականութիւնն ենք՝ հատարում։

Անշուշտ, որչափ էլ մեծ լինի այդ օգնութիւնը, այնուամենայնիւ չէ կարող ծածկել նրա խոշոր վնասը. բայց և այնպէս պէտք է անել այդ, որով ցոյց կը տայ հասարակութիւնը դէպի նրա գործը հատարկութեան առհաւատչեայ, ի նշան խրախուսանքի ժրաջան գործչի։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Սղնախ, 1 նոյեմբերի

Տեղիս քաղաքային դպրոցի վերանորոգութիւնն աւարտվեց։ Ուսումը սկսվեց հոկտեմբերի 1-ին։

Անցեալները հաղորդել էինք, որ ժամապահեստը տրվեց կապալով տարեկան 500 ռուբ., մինչդեռ տնտեսական եղանակով կարող էր բերել մօտ 700 ռ.։ Այդ մասին այս կարծիքը կայ. «Բաս ինչ անենք, ում տուեցինք՝ կերաւ, հոգաբարձութիւնը չէ կարելի հաւատալ, աւելի լաւ է 500 ռ. ստանալ նաղդ, քան թէ կորցնել»։ Դա ցաւալի է, բայց դաժն իրողութիւն է։

1899 թ. հանգուցեալ Դէորգ ք. Տէր-Դաւթեանը, մոմապահեստի փողերը ծախած լինելով, ստորագրութիւն տուեց քննիչ յանձնաժողովին 360 ռ.։ Այդ թուղթը գտնվում էր Վ. Ենիկոլօփեանի մօտ։ Ցանկալի է, որ հոգաբարձութիւնը բացատրէր, թէ գոյութիւն ունի՞ այդ թուղթը, թէ ոչնչացաւ, թաղվեց...

N. N.

Զաքաթալա, 1 նոյեմբերի

Խալերան Ալէքսանդրօպոլ և Կարս տարածվելուց յետոյ՝ մուտք գործեց և Արևելեան ու Արևմտեան Շիրակ ու բաղմաթիւ գեղեր տարաւ գիւղերից։ Կառավարութեան կարգադրութիւնով երկու մասումն էլ գիւղական հասարակական դատարաններից շրջաբերական հրամանները ուղարկվեցին ամեն գիւղ, որպէսզի իւրաքանչիւր գիւղում հիւանդանոցներ բացվեն և բժիշկներ հատատվեն։ Ներկայումս ողջ Շիրակը զերծ է այդ համաճարակ հիւանդութիւնից. թէև վերջերս մի դէպք եղաւ, բայց այն էլ աջող անցաւ։

Շիրակի գաւառի շատ գիւղերում մինչև այժմ գոյութիւն ունեն վատ ու անպատ սովորութիւններ հողը հերկելու համար։ Այդ գիւղերում սովորութիւն են դարձրել աշանը հերկելու հողերը, փոխանակ ամառը, որպէսզի հողը փխրուն դառնայ և այլվի արևի տակ. ընդհանրապէս ամառնային հերկերը աւելի պտղատու և նպատակայարմար են, քան թէ աշնանային, երբ ցուրտերը սկսված են և հերկը այնքան նպատակայարմար պտղաբեր չի լինի։

Մեր գաւառական դպրոցները անօրմալ վիճակից հանելու և քիչ ու շատ օրինաւոր ուսուցիչներ ունենալու համար, պէտք է գաւառական ուսուցչական ժիութիւն հիմնել։

Տէր-Սարգսեան

Շուշի, 27 հոկտեմբերի

Մօտենում են ձմեռվայ ապրուստի հայթայթման ամիսները... Աշխատանքի այդ եռուն օրերին փոխանակ օտարութեան մէջ գտնվող աշխատող ոյժերը հայրենի երկիր վերադառնալու՝ ընութիւնից բաժին ընկա-

*) Բէքէլ. «Գինը և սոցիալիզմը»։

**) Նոյն տեղ։

ծը ժողովելու համար՝ ընդհակառակն ամեն օր նորինը խմբերը են թափվում Շուշի քաղաքը և սկսում պարապել զողութեամբ։

Այս քանի օրս զողութեան մի քանի դէպքեր են պատահել քաղաքիս մէջ... Կենտրոնական քաղաքներից՝ արդիւնաբերութեան կրկիսից ընկճված՝ գալիս են, թէ ուր՝ իրանք էլ չը գիտեն։ Բաղդը նրանց հալածում է ամենուրեք, սովի դժան ուրուականը նրանց ուղարկում է դէպի նոր հորիզոններ։

Անդրկասպեան երկրում հիւրընկալողներն են դրանք։ Այդ շրջանումն են հաստատվում մեր նոր պանդուխտներից շատերը, միշտ վառ յոյս ունենալով իրանց մտրիկ ապագայի վրա, առանց գիտակցելու որ նոյն անգործութիւնը այդ տեղերումն էլ է թագաւորում։ Մի քանի տարի ապրել են քաղաքներում ու գիւղերում, մի քանի տարի էլ այստեղ կապրեն և վերջը հիւծված, մահվան զուռ հասած՝ անտեսական աւելի անմխիթար դրութեամբ՝ կամ տուն կը գընան և կամ վերջ կը տան իրանց խղճուկ գոյութեանը։ Դրա դիմաց հիւծվում է նաև հայրենի գիւղը, որը զուրկ է երիտասարդ աշխատող տարրերից։ Զգում են այդ բոլորը և դարձեալ շարունակում են տարիների գաղթը։ Ո՞ւր։ դրա մասին ոչ ոք հաշիւ չէ տալիս։

Մ.—եանց

## 12 ՕՐ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

### V

12 օր Էջմիածնում մնալով տեսայ հետեւեալը։

ա) Վեհափառ Հայրապետը՝ իրան յատուկ տոկունութեամբ՝ աշխատում է Էջմիածնի միաբանութեան և ճեմարանի մէջ մտցնել ժամանակակից կարգ ու կանոն։

բ) Սինոդի գործավարութիւնը լինում է արագութեամբ և խոհեմութեամբ։

գ) Վեհարանի դիւանատան խորհուրդը կազմված լինելով համալսարաններից մեծ մասամբ՝ վստահութիւն է ներշնչում խնդրատուներին։

դ) Բարերար Աւան Իւզբաշեանի ծախքով շինվող երկյարկանի, գեղեցիկ և հաստատուն շինութիւնը արդէն վերջանալու վրա է։

ե) Տպարանը՝ բարեկարգ դրութեան մէջ է գտնվում։

զ) Վանքի տնտեսական խորհուրդը՝ յիշեցնում է դիտողին անխնայ մրջիւններին և մեղուներին։ Այս տարի վանքը մոտաւորապէս ունի 6,000 պուդ խաղող և 1,200 խալվար ցորեն։

Սրապիոն ք. Սամուէլեան

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Պետերբուրգ, 3 Նոյեմբերի

Նախագահում է իշխան Դուլգօվը։

Կարդացվում են ստացված գործերը, որոնց թւում ներքին գործերի մինիստրի նամակը Թիֆլիսի դատաստանական պալատի դատավորի պատճէնի հետ՝ Թիֆլիս քաղաքի պրիստաւի օգնական Գվատուայի գործի առիթով, որ դատապարտված է Նիկոլայ Զիսէիձէին կեղծ ցէնզի վկայական տալուն համար։ Ընդ սմին ներքին գործերի մինիստրը հաղորդում է, որ պալատի հրաման հանած փաստերի հիման վրա, որոնք վկայում են, որ, յիրաւի, Զիսէիձէի անունը ապօրինաբար է մտցված Թիֆլիսի նահանգի քաղաքային ընտրողների ցուցակի մէջ, նա՝ ներքին գործերի մինիստրը՝ տեղեկացել է Կովկասի Փոխարքային՝ դուրս հանել Զիսէիձէի անունը ընտրողների թւից և ընտրողական ցուցակներից։

Դեգէչկօրին յայտնում է.—Ստացված թուղթը ձևական իրաւունքի տեսակէտից պէտք է քննել, իբրև բողոք Թիֆլիսի նահանգի անկանոն ընտրողական կատարման դէմ, և հանրական ընդունված կարգով այդ թուղթը պէտք է յանձնվէր համապատասխան բաժնի քննութեան, ինչպէս Դումայում վարվել է մի քանի անգամ։ Իսկ ինչ ենք տեսնում ներկայ դէպքում։ Խախտում այդ ընդհանուր կանոններից։ Թուղթը կարդացվում է ամբիոնից՝ ցեխի մէջ գցելու համար Դումայի անդամ Զիսէիձէին և նրա ֆրակցիան։ Եթէ դրանով ուզում են մեզ խայտառակել, ես յայտնում եմ, որ այդ ամբողջ թուղթը, ինչպէս և Զիսէիձէի ընտրութեան ամբողջ պատմութիւնը, սուտ է և խնդիրացիա ադմինիստրացիայի կողմից, ներքին գործերի մինիստրութեան կողմից... (ծափեր ձախից)։ Մենք յայտնում ենք, որ պրեզիդիումի վարմունքը ներկայ դէպքում մենք մեկնում ենք իբրև անձնական անկում (ձայներ ձախից՝ «ճիշդ է»)։ Մենք այն սահման մաքուր ենք, որ այդ ցեխը մեզ չի հասնի (ծափեր ձախից)։

Նախագահը յայտնում է.—Առաջարկելով Դումային վճռել այդ գործի քննութեան հարցը, պրեզիդիումը դեկավարվեց այն աշխարհահայեացքով, որ ընտրութիւնները ստուգող բաժինը ստանում է միայն նախնական կատարումը։ Դումայի անդամների հաստատութիւնից յետոյ՝ բաժինը նրանց վերաբերութեամբ դադարեցնում է իր յուրաքանչիւրութիւնը։ Ներկայ հարցը կարելի է քննել ուրիշ տեսակէտից ևս, այսինքն՝ իբրև մի պահանջ կառավարութեան կողմից Դումայի անդամ Զիսէիձէին հեռացնելու մասին (աղմուկ ձախից։ ձայներ աջից՝ «ճիշդ է»)։ Այդ պատճառով, եթէ մանաւանդ ամբողջը թոյլ չէ տուել իրան Դումայի հակառակ գործին ընթացք տալ, միայն այն պատճառով, որ գտաւ, թէ կարող է լինել ուրիշ առաջարկութիւն, այսինքն՝ յատուկ մասնաժողով կազմել ներկայ գործի քննութեան համար, որպէսզի Դումային լիակատար ազատութիւն տրվի հարցը վճռելու։

Աջակողմեան Նովիցկիի և Բարանովսկի խօսելուց յետոյ, Բալլասը ասում է, որ այս ամբողջ գործը ստեղծվեց նրանից, որ կառավարութիւնը և երրորդ Դումայի մեծամասնութիւնը ամեն կերպ աշխատում են ցեխ շպրտել և խայտառակել իսկական ժողովրդական ներկայացուցիչներին (ձիծաղ աջից)։ Եթէ երրորդ Դուման գնահատէր ժողովրդական ներկայացուցիչների անունը, նա առանց վիճաբանութիւնների կը մերժէր այդօրինակ ինսինուացիաները։

Ընդունվում է մասնաժողովի առաջարկութիւնը գործը առաջին բաժնին յանձնելու մասին։

Դեգէչկօրին, հերթից դուրս յայտարարութիւն անելով՝ որ նախագահը նակազը խախտեց անցեալ նիստում, վկայում է, որ մարդկային կերպարանքը կորցրած մարդկանց խօսքերը կարդին մարդկանցից ոչ ոքի չեն կարող վիրաւորել։
